Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

891.99
Ц-52

891.99
Ա-52
20 JAN 2006

ՏԻԳՐԱՆ ԱՄԻՐՃԱՆԵԱՆ

ՈՒՍԵԱԼ ՊԱՆԴՈՒԽՏ

(Վաւերական կեանքից)

Ամփոփեց
Խ. ՏԷՐ-ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆՑ

ԹԻՖԼԻՍ
Կ. Մարտիրոսեանցի տպարան || Тип. К. Мартиросіанцъ
Большая Ванкская № 5
1903

08.02.2013

19135

Дозволено цензурою. Тифлисъ 29-го ноября 1902 г.

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՍՍՌ ԱԿԱԴ.ՍՍՀ
Մ. Ա. ՄԱՍԻՍԻԱՆԻ ԱՆՎԱՆ
ՄՍԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
4186-48

ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍՔ

Զը նայելով այն երկար ժամանակամիջոցին, երբ առաջին անգամ լոյս տեսաւ «Ուսեալ պանդուխտը» և թէև այն օրից մինչև օրս շատ փոփոխութեան ենթարկուեց թէ ժամանակն և թէ մեր կեանքը, բայց պանդխտութեան ընթացքն երբէք կանգ չառաւ. այլ ընդհակառակն՝ զարգանալով ժողովրդի միտքը՝ զարգացան նաև նրա հոգեկան ու նիւթական պահանջները, որոնց նա չը կարողանալով բաւարարութիւն տալ՝ բուն հայրենիքում տիրող քաղաքական և սոցիալական արգելառիթ պայմանների պատճառով, կարծես աւելի բուռն տենչով սկսեց պանդխտել։ Համոզուած լինելով կեանքի փոփոխութեան և ձեռքիս տակ ունենալով հանգ. Տիգրան Ամիրճանեանի սրտառուչ ոտանաւորներից կազմուած շարադրութիւնն—«Ուսեալ պանդուխտն», որին հեղինակը ողբերգութեան ձև է տուել, հարկ համարեցի քաղուածօրէն հրատարակել՝ մասամբ նպատակ ունենալով պանդուխտ եղբայրների սրտում միշտ թարմ պահել հայրենիքից բաժանման նախօրը, մասամբ էլ կարելի եղածին չափ միջոց տալ Կովկասի հայ ընթերցող հասարակութեան ծանօթանալու՝ յետ ընկած գաւառական քաղաքում (որպիսին է Վան) անդուլ եռանդով տասնեակ տարիներ գործող հասարակական համեստ գործչի և նոյնքան ժամանակ իբրև բարի հայր՝ սերունդներ կրթող բեղմնաւոր ուսուցչի տաղանդին։

Իմ այս կրճատ հրատարակութիւնը գուցէ հայրենակից ընթերցողներիցս շատերի դժգոհութիւնը յարուցանէ իմ դէմ, բայց ինձ արդարացնելու համար կասեմ, որ «Ուսեալ պանդուխտն» իբրև թատրոնական ողբերգութիւն՝ վաղուց կորցրել է իր նշա-

նակութիւնն (եթէ երբ և իցէ ունեցել է). իսկ նրա թոյլ, անկապ, հոգեբանութիւնից զուրկ դարձուածքները կարող էին բոլորովին նսեմացնել զգացումով լի բանաստեղծական հատուածները, որոնք իբրև հայ ժողովրդի վշտի զգացման արտայայտութիւն, կարծում եմ, որ երկար տարիներ ընդունակ կլինեն անմահ պահելու հեղինակի անունը: Դրա փոխարէն օգտուելով բնագրից, բովանդակութիւնն անաղճատ պահելու դիտաւորութեամբ՝ աշխատեցի կապակցութիւն հաստատել ոտանաւորների մէջ. իսկ հեղինակի արձակ ոճի մասին մի գաղափար տալու նպատակով, ամբողջովին մէջ եմ բերում նրա այդ ողբերգութեան յառաջաբանը, որ ամենալաւագոյնն է:

Ուստի թող ներեն ինձ ընթերցողք, եթէ որևէ պակասութիւն կը գտնեն իմ այս հրատարակութեան մէջ, որը ձեռնարկեցի միմիայն դրդուած դէպի հեղինակը տածած իմ խորին յարգանքից և դէպի պանդուխտ եղբարքս ունեցած անկեղծ սիրուցս:

Ղ. Տ. Յ.

ՈՒՍԵԱԼ ՊԱՆԴՈՒԽՏ

Ժամանակակից չը լինելով՝ չը գիտեմ ինչ ընդունելութիւն է գտել «*Ուսեալ պանդուխտը*», երբ առաջին անգամ լոյս է տեսել 1873 թուականին Վարագի տպարանից. բայց հաւանական եմ համարում, որ շատ աննկատ պէտք է անցած լինի: Միայն 70-ական թուականների վերջերը թէ 80-ական թուականների սկզբնեբում հեղինակի եռանդուն ջանքերի և աշխատութեան շնորհիւ մի քանի անգամ բեմ է հանուել, իբրև իրական կեանքի ողբերգութիւն, վերցրած տեղական կեանքից: Վանի հայ հասարակութիւնն այդ ներկայացումների մէջ տեսնելով իր կեանքի անդրադարձութիւնը, սիրել է նրա բովանդակութիւնն և այն օրից այդ ողբերգութիւնը դարձել է ընդհանուրի սեփականութիւն. ես աւելին կասեմ, այն թեման, որ հեղինակը վերցրել է իր ողբերգութեան համար, այնքան իրական է, որ ամեն մի վանեցին իր դերը բերան գիտէ...

Պանդխտութիւն... դարերից ի վեր դա մի աղէտ է եղել ամբողջ Հայաստանի համար և իմ ուժից շատ վեր է ոևէ կերպով քրքրել այդ խնդիրը, բայց բաւականին հետաքրքրուած լինելով՝ թւում է ինձ, որ ոչ մի տեղի պանդխտութիւնն այնքան դառն ու կսկծալի չէ եղել, որպիսին եղել է և դուցէ դեռ երկար կը լինի՝ ընդհանրապէս Վասպուրականի նահանգում, մասնաւորապէս Վա-

նում։ Ահա այդ՝ տարին մի քանի անգամ կրկնուող աղէտալի կսկիծն է, որ այնպէս խորն ազդելով ականատես հեղինակի սրտին, դրդել է նրան իր այս ողբերգութեամբ, թարգման լինել, թէ պանդխտողի և թէ նրա մերձաւորների զգացմանց։

Հեղինակը իր յառաջաբանում սրտառուչ պատկերներով բացատրել է այն դրդիչ պատճառներն, որոնք տեղիք են տուել այս ողբերգութիւնը հեղինակելու, և իր կողմից այդ կորստաբեր ընթացքը կասեցնելու համար միջոցներ է առաջարկում։ Ընդունելով հեղինակի բարենպատակ առաջարկութիւնների բազմազան օգտակարութիւնը, (թէև երեսուն տարուայ ընթացքում շատ քիչ են գործադրուել), կաւելացնեմ, որ ոչ մի միջոց չէ կարող կասեցնել տաճկահային՝ քանի որ պանդխտելու պատճառներն աւելի խորն ու բազմակողմանի են և գլխաւորապէս կախում ունին քաղաքական բարեփոխութիւնից...

«Ռանաղ պանդոխտն» ինքը գրքոյկի հերոսն է, որին հեղինակը ներկայացնում է մեզ իբրև մի հանճարեղ քնարերգու բանաստեղծ՝ Ներսէս անուան տակ, այնպէս՝ ինչպէս պ. Զահ-Ազիզի Լևոնը. միայն ուղղութիւններն են տարբեր... մինչդեռ պ. Զահ-Ազիզի Լևոնը զինուած Եւրոպական գիտութեան առատ պաշարով, իր ազգին ծառայելու տենչով ձգտում է դէպի Հայրենիք. այստեղ Ամիրճանեանի Ներսէսը կրթուած բանաստեղծ լինելով հանդերձ՝ անկարող է տանել իր հայրենիքում տիրող աննրպաստ պայմաններն և իր վաշխառու պարտատէրներից ազատուելու միակ միջոցը գտնում՝ պանդխտութեան մէջ...։ Հեղինակը ջատագովում է ուսումն ու գիտութիւնը, բայց և այնպէս իր սիրած հերոսը կրթուած, զարգացած լինելով՝ առանց որև է հասարակական գործունէութիւն ցոյց տալու, առանց լոյսի ամենաթոյլ շողք ցոլացնելու՝ իրան շրջապատող խաւար մթնոլորտի մէջ, վախկոտութեամբ փախչում է հայրենիքից, անիծելով տգիտութիւնն, որ թոյլ չի տալիս իր արժանաւորութիւնը գնահատելու...։ Երևի հեղինակը ցանկացել է, որ կրթուածներն այնքան ժամանակ հեռու մնան հայրենիքից, մինչև որ հասարակութիւնը զարգանալով գնահատէ նրանց արժանաւորութիւնն ու հրաւիրէ իրանց հասարակական գործերը ղեկավարելու... վանեցոց մի առածի նման, «ծամեն դնեն բերաններն, որ կրթուածները կուլ տան»։ Բաւական տարօրինակ միտք կը լինի, գոնէ ներկայիս վերաբերմամբ... Բայց ի հարկէ իմ նպատակը՝ չէ քննադատել կամ համեմատութիւններ անել «Լևոնի վշտի» նման մի գեղարուեստական երկի հետ, միայն ինձ չէ պատահել կարդալ մէկն առանց միւսը յիշելու...

Այնուամենայնիւ մեծ հաճութեամբ յանձն կառնէի դէթ՝ համառօտ կենսագրութեամբ ծանօթացնել ընթերցողին հանգ. Տիգրան Ամիրճանեանի կեանքի գլխաւոր գծերին՝ բայց թող ներեն ինձ հետաքրքիր ընթերցողք, որ ձեռքիս տակ չունենալով կարևոր նիւթեր՝ աւելի ձեռնահաս անձանց եմ թողնում այդ բաւականութիւնը վայելելու. միայն աւելորդ չեմ համարում, իմ գիտցած մի քանի հատուկտոր տեղեկութիւնները տալ, որին ծանօթ են համարեա բոլոր վանեցիները։

Հանգուցեալ Ամիրճանեանը, ընիկ վանեցի՝ իր կրթութիւնը ստացել է Վարագում. յետոյ Կ. Պոլիս գնալով՝ չորս թէ հինգ տարի ուսուցչի պաշտօն է կատարել Գադի-գեղ կոչուած քաղաքամասի թաղային դպրոցում. Վե-

հափառ Հայրիկի յորդորանօք, որ այն ժամանակ Վանի առաջնորդն էր, հայրենիք վերադառնալով, Ս. Ղուկասեան անուանեալ խալֆայական դպրոցում ուսուցչի պաշտօն է ստանձել և որի մէջ դպրոցական նորագոյն սիստեմ մտցնելու համար մեծ ջանք է գործ դրել։ Հանգուցեալը, բացի հայերէնից, լիովին տիրապետում էր տաճկերէն լեզուին, գիտէր նաև ֆրանսերէն. իր անդուլ ինքնաշխատութեան շնորհիւ, միշտ բարձր կանգնած լինելով շրջապատող հասարակութիւնից և իբրև կրթուած լուսամիտ գործիչ, արծարծելով ու մասնակցելով զանազան հասարակական խնդիրներին, ունէր բազմաթիւ հակառակորդներ, որոնք մինչև նրա մահն ոչ մի չնչին առիթ ձեռից չը փախցրին, հասարակութեան աչքում վայր գցելու հանգուցեալի վարկը... Այնուամենայնիւ առանց մանրամասնութիւնների մէջ մտնելու, կարող եմ ասել, որ չը նայելով հանգուցեալի՝ իր հակառակորդներից կրած դառնութիւններին, իր ամբողջ գործունէութեան ընթացքում նա մնաց հաւատարիմ իր կոչման և չքաւորութեան մատնելով ամբողջ կեանքը, տասնեակ տարիներ անտրտունջ տարաւ գաւառական ուսուցչի ծանր լուծը։

Հանգուցեալը ջերմ կերպով սիրել և գնահատել է հայկական թատրոնը, որի համար գրել է մի քանի ինքնուրոյն պիեսաներ — ողբերգութիւններ, որոնց ներկայացումը անձամբ ղեկավարելով ծանօթացրել է Վանի հասարակութիւնը թատրոնական գաղափարին. ունի նաև տպուած և անտիպ աշխատութիւններ, որոնց մէջ աչքի է ընկնում հանգուցեալի բանաստեղծական բնատուր տաղանդը, որ զուցէ մի ուրիշ շրջանում աւելի բեղմնաւոր լինէր...

Տիգրան Ամիրճանեանը իր ծերութեան հասակում հեռացուած ուսուցչական ասպարիզից, ապրում էր առանձնացած՝ աղքատ ու չքաւոր, մի քանի համակրող բարեկամների որդոց տուած դասերով օրական ապրուստ հայթայթելով։ Ինչպէս պատմում են, հանգուցեալը իր կեանքի վերջին տարիներում, տաճկական վարչութեան մէջ ինչ որ մի հասարակ պաշտօն ունէր, որտեղ և մահը վերջ դրեց նրա վաղաժամ խոնջացած կեանքին։

Ղ. Տ. Ց

ՀԵՂԻՆԱԿԻ ՅԱՌԱՋԱԲԱՆԸ

Ո՞րն է այն բարոյական հրէշը, որ դարերէ ի վեր Հայաստանի և գլխաւորապէս իմ Հայրենեաց մէջ շատեր իւր անգութ ժանեաց կուր կ'ընէ և շատերը վիրաւորած կիսամեռ կը թողու։

—Աւա՜ղ, պանդխտութիւնն է այն։

Ջանգակի ձայն կը լսեմ. այլ և ինչ մեծ ողբ ու կական...

Ահա՛, մանկամարդ կին մը ուշաթափուած գետնի վրայ կը փռուի. ծերունի կին մը գեղեցիկ երիտասարդի մը գլուխը պինտ իւր լանջած վրայ դգուած՝ արեան արտասուք կը թափէ և երկու առոյգ երիտասարդք զայն բաժնելու կաշխատեն. ծերունի մը ի ցուպ յենած՝ դըլուխը խոնարհած, հազար կայլակներ կ'ինջեցունէ. և երկու մատաղահասակ սիրուն մանուկներ «Աւա՜ղ, ինչ սև օր է», կ'ըսեն և իրենց վարդ երեսներ արտասուաց ցօղերով կը թաթխեն. ինչ կայ, Աստուած իմ, ինչ կայ։—Կ'ուշաթափի այդ մանկամարդը, զի իւր գլխոյ պսակը, իւր միակ երջանկութիւնն ալ կը բաժնուի իրմէ։ Դողդոջելով կուլայ այդ ծերունին, զի իւր ծերութեան զօրաւոր նեցուկ, երիտասարդ որդին կը թողու զինքը։ Գլուխը թողուլ չ'ուզեր այդ ծերունի կինը, զի իւր արգանդին մէջ կազմակերպած է, իւր կաթով սնած, իւր յոյսերու ծաղկունքն անով բացուած

և այժմ կը թառամին։ Կուլան այդ երկու սիրուն մանկունքը զի Հայը մը կը կորսնցունեն, որ զիրենք խանդակաթ կը դգուէր և իրենց շատ բաղձանքները սիրով կը կատարէր։ —Թող լան ուրեմն, թող կոծեն զի շատ իրաւացի է իրենց կսկիծը։

Ո՞վ է այդ պատանին, որ թէպէտ սիրուն տեսքով, բայց իւր բիրտ վարմունքը, իւր գեղձուկ արտասանութիւնն և լրբենի խօսքերը, ինձ մահու չափ ատելի կ'երևցունեն զինքը։ Ո՛հ ինչո՞ւ այս դարու մէջ պատանի մը այդ աստիճան անկիրթ։—Պատանի մը է դա՝ որուն Հայրը տասն տարիէ ի վեր ի Կ. Պոլիս կը դեգերի։ Մի կողմանէ իւր մօր՝ սիրելի ամուսինէն բաժանմամբ իւր սէրը մոլեգին իւր որդւոյն տալը, և միւս կողմէն կանացի անագդոյ բնութիւնը այդ բարետիպ պատանին այդ աստիճան թշուառութեան հասուցին։ Տուաւ զինքը զբօսանաց, խաղոց և անառակ ընկերաց տեսակցութեան և եղաւ նախատինք ազգին և մարդկութեան։ Աւա՜ղ, քանի՜ ողորմելի է այն որդին, որուն պատանեկութեան ու երիտասարդութեան շրջանները հօր մը և կամ բարի խնամակալի մը զգուշաւոր հսկողութեան թևոց տակ չեն անցներ։ Այդպիսին կը նմանի այն որթին, որ անմշակ մնալով կը յառանայ և ազոխ կը բերէ։

Ինչո՞ւ այդ երիտասարդ գեղանի աղջիկը այդպէս ցընցոտիներով ծածկուած է. բարէ՛, որքան տխուր և ճընշուած կերևի՝ ակամայ սնանկացողէ մը աւելի ցածուն և զգուշաւոր է։ Իւր ընկերները կը պարեն զուարթագէմ և սիգապարանոց։ Իսկ նա աչքն ի խոնարհ՝ վեր նայելու չի համարձակիր։—Տգիտութիւնն և դիպուածը այդ աղջկան Հայրենի ճոխ տունը կողոպտուած տան մը պէս տխուր

դարձուցին։ Առ սատիկ վշտին մեռան իւր հօրեղբարք. և իւր հայրը՝ որ արդէն քիչ մը գաղանային սիրտ ունէր և քիչ մը ալ բազմաժամանակեայ բաժանումն օգնեց, այժմ ի Կ. Պոլիս բոլորովին իւր դուստր և ամուսինը մոռցած՝ իւր քրտանց վաստակը շռայլութեամբ կը վատնէ. և ահա ասոր համար տխուր է այդպէս այդ քնքոյշ արարածը։—Մի՛ հայիր, մի՛ հայիր, ցաւալի աղջիկ, որ քու թշուառութիւնդ աւելի զգալի չը լինի, հօր մը իւր որդւոյ վրայ գորգորալը տեսնելով։ Մի՛ հայիր որ չըսես թէ՝ եթէ հայր մը իւր որդւոյն վրայ այսքան մեծ գութ ունի, ուրեմն ինչո՞ւ իմ հայր դիս բոլորովին բարձի թողի կընէ. ահ պռունկորդի եմ ես միթէ...։

Ո՞վ է այդ կնճռոտած դէմքով մարդը, որ մատաղահասակ օրիորդի մը ձեռքէն բռնած, սուրբ սեղանին առջև կը կենայ. բաբէ՞ ամուսնական ուխտեր կը թռչին իւր բերնէն։ Ինչո՞ւ, մինչդեռ կը տեսնեմ, որ քսանհինգ ամեայ երիտասարդները կայտառուն և կլորիկ որդիքը առջևնին շարած՝ եկեղեցւոյ մէջ կը նստին, դա իւր քառասնամեայ հասակին մէջ դեռ նոր կամուսնանայ։—Ա՜հ, դեռ նոր կամուսնանայ, քանզի ի տես պատանեկութեան ի Կ. Պոլիս գնաց և մինչև այս տարիքը անառակ որդւոյն պէս իւր կեանքը պռունիկներու և շնացողներու հետ ծախելէ ետքը՝ երիտասարդական եռանդագին հրոյ բորբոքման մեղմանալովը խիղճն արթնցաւ և վերադարձաւ իւր հայրենիքը առ իւր կարօտամաշ ծերունի մայրը, և նորա թախանձանօք կամուսնանայ արդ։ Ա՜հ, երրակի աղէտք։ Նախ՝ որ քանի մը մարդկային սերունդներ դորա ապաժման ամուսնութեամբ կեանք և արև չը տեսան. երկրորդ՝ որ մատաղ կոյս մը փոխանակ այդ ամուս-

նութեամբ երջանկանալու՝ կը թշուառանայ. և երրորդ՝ որ այն կեանքը պիտի ունենան դորայ ծնանելի զաւակունքը, ինչ որ ունին շերամին երրորդ անգամ թափած սերմերէն դոյացած որդերը։ Ցիրաւի արտասուելի՞ աղէտք։

Ինչո՞ւ այդ մանկամարդ կինն այդպէս մազերը ցիրուցան, քօղը թափթփած, թոյլ լաչակով և թոյլ ոտքերով եկաւ փռուեցաւ այդ պատկերին առջևը և կուլայ և կը կոծէ առանց բառ մը արտասանելու։—Այո՛, պէտք է որ լայ, զի այն ինչ ամուսնացաւ և ահա ամուսինը հեռացաւ։ Տասն տարի է, որ առանց զաւակի, առանց միխիթարութեան, ցորեկը լալով, գիշերը սարսափով իւր անձկալի ամուսնոյն դարձին կը մնայ և չի գտներ։

Ինչ խաւարին, խոնաւ և խարխուլ սենեակ մը է որ կը տեսնեմ։ Ո՞վ է այս, որ առանձին զազիր և ըզքտած անկողնոյ մը մէջ կը պառկի և աղիողորմ կը ձայնէ. «որդեակ իմ, ամուսի՞նդ իմ, կը պապակիմ, կաղաչեմ, կաթիլ մը ջուր» բայց ոչ ոք կայ։—Ա՜հ, պանդուխտ մը է դա հիւանդութեան տագնապին մէջ։ Տեսնելով որ իւր պապակած լեզուին կաթիլ մը զովարար ջուր մատուցանող չը կայ՝ կը ցնորի, և իւր որդին ու ամուսինը ներկայ կարծելով՝ ջուր կուզէ ու ձայն տուող չկայ. «կաղաչեմ, կաղաչեմ» կ՚ըսէ ու դարձեալ չի կատարուիր, ո՜հ և շատ կը զարմանայ։—Կանչէ՛, կանչէ՛, որչափ կուզես, խղճալի պանդուխտ, քեզ ձայն տուող չը կայ մինչև երեկոյ։ Երեկոյեան ընկերներդ գործէ դատարած առ քեզ կը դառնան և ջուր կը մատուցանեն. բայց ո՞վ գիտէ թէ որքան տրտնջելով։

Ա՛րդ, կը դառնամ առ քեզ, պատուական ընթերցող։ Մի՛ տարակուսիր թէ ինչո՞ւ ինչ որ բուն իսկ տեղը խօսել

պէտք էր, յառաջաբանին մէջ կը խօսուի։ Այսպիսի յառաջաբան մը ընտրելուս նպատակը ոմանց դժգոհութեան ձայնը աւելի չը բարձրացնելն էր. քանզի, թէ իմ և թէ հայրենեացս վիճակը չէր ներեր պանդխտութեան վշտաց և աղտից մանրամասն նկարագիրն ընել, որ ընդարձակ հատորի կամ թերևս հատորներու պէտք ունէր։ Այո, եթէ այսպէս յառաջաբան մը չ'ընտրէի, երեք արարուածի բաժանեալ փոքրիկ ողբերգութիւն մը ըստ բաւականին գոհ չը պիտի ընէր հասուն և հետաքրքիր միտքերը։

Հարկ է ասել նաև. թէ՝ անգութ հարստահարութիւնն էր, որ ծնաւ այս ահռելի հրէշը, և տգիտութիւնը իրեն օգնական առնելով, սնոյց զայն կշտապինդ։ Ինքն ծերութեան հասաւ քիչ մը այո, բայց տգիտութիւնը գրէթէ առոյգ է, ուստի և կը սնանի նա տակաւին և իւր ժանեաց ոչ սակաւ զոհեր կուտայ։ Ի՞նչ միջոց կարող է բառնալ սոյն տգիտութիւնը, այս ժանտատեսիլ և գազանանմիտ սև որդին։—Հայաստանի մէջ, ուսմունք և գիտութիւնք ընդհանրացնելու համար կազմուած բարենպատակ ընկերութիւնք և Հայազգի նշանաւոր հարուստներու ձեռնտուութիւնք. ահա գլխաւոր միջոց։ Կան երկրորդական և երորդական միջոցներ ալ. երկրորդական միջոցն է ներկայացուցանել շատ անգամ զգայուն և ուսեալ անձանց միջոցաւ այս և ասոր նման ողբերգութիւնք. ի ներկայութեան պանդուխտ և պանդխտութեան սովորող եղբարց. և երրորդական միջոցն է կարդալ յաճախակի զգայուն կերպով այսպիսի գրուածներ այն տեսակ անձանց։

Տիգրան Ամիրճանեան

Ա.

Թաւազարդ այգու ստուերախիտ թաւուտներում մտամոլոր զբօսնում էր բանաստեղծ Ներսէսը. նա դառն յուզմունքից ալէկոծուած՝ ցանկանում էր արտասուելով թեթեւացնել իր վշտից ճնշուած, քարացած սիրտը. բայց առնականութիւնը արգելք էր լինում... Նա չէր լսում գարնանային զեփիւռից առաջացած մեղմ փսփսուքը, որ անցնելով ծառերի ստուերախիտ արանքներից՝ շարժում, խշշրտացնում էր նրանց գալարազեղ տերևները, որոնք վերևից ներքև նայելով՝ մի խորհրդաւոր քչփչան շշուկով կարծես հեգնում էին մարդկանց անբաղդութիւնը... Նա չէր լսում նաև առուակի երկու կողմից խտութեամբ տնկուած վարդնոցի արանքներում թաղնուած սոխակների սիրային դայլայլները, որոնք կարծես վերջին գարնան երգեր լինէին... այլ անտարբեր և յուզմունքից յոգնած, փռուելով կանաչազարդ գետնի վրայ, ձեռքը գլխին յենակէտ դրած, թաւազարդ ծառերի

փոքրիկ բացուածքներից, անտարբեր կերպով նայում էր կապոյտ երկրակամարին, որի վրայից այդ բոպէին գեղարուեստական գեղեցկութեամբ, անապատի միջից անցնող կարաւանի նման՝ իրար յետևից լողալով սահում էին բամբակի դուլաներից սպիտակ ամպի պատառիկներ...

Ահա հէնց այդ բոպէին չարաճճի թռչնիկների մի ամբողջ երամ, ամենայն ուժգնութեամբ եկաւ թառեց մօտակայ պտղալի ծառի վրայ և նրանց բազմաթիւ ճրվլրլոցները միախառնուելով լցրին այդին՝ մի խլացուցիչ ժըխորով. բայց շուտով գրաւուելով նորահաս թթերից, սկսեցին ճրվճրվալով կըչկըչալով կոցահարել... միայն նրանցից մէկը, պատահմամբ թէ դիտմամբ, ցածի ճիւղերից մէկի վրայ թառած՝ կտուցը դէպի խոտերի մէջ թէք ընկած բանաստեղծն ուղղած՝ առանց ընկերների կերուխումին ուշադրութիւն դարձնելու, ամենայն ուժով երգում, սուլում, դայլայլում էր... փոքրիկ թռչնիկի այդ զգայուն դայլայլը յուզեց բանաստեղծի քարացած սիրտը. նա ոգևորուելով՝ խօսքը ճրվրլացող թռչնիկին ուղղած սկսեց երգել.

Լռէ թռչնիկ սիրահար, բնութիւն համայն կաց ունկնդիր,
Քան զամէն արարածոց՝ վա՜հ զգայուն մարդ կը խօսի,
Եւ առաւել քան թէ մարդ՝ հէգ բանաստեղծ մի կը խօսի,
Հայրենեաց հեշտ ափերից, բաժանուելու մօտ կը խօսի,
Սիրականին արտասուք, սիրտն ի տոչոր անձ մը կը խօսի,
Դեռաբոսիկ մանուկները անտէր ձգող հայր մը կը խօսի։

———

Ա՜հ, որի՞ ես նման եմ, ինձ պէս թշուառ իսկի չէրկայ,
Զգայուն՝ բայց ցամքած, մի հայրենեաց որդի ծնայ,
Գերի եղայ ես սիրոյ, սիրոյ հեշտիկ գիրկ խնդրեցի,
Եւ գտայ և արտասուք և հառաչանք հոն թափեցի.
Մինչ նորա փափուկ ձեռքեր, կաթիլք աչաց իմ ժողվէին,
Եւ որդիքս վարդակարմիր, հայր, քաղցր անուն թոթովէին,
Նոր յուսոյ անուշ իւղով, դէմքս զուարթ քան զառաջին,
Թէ քանի տարի մի ևս որդիքս ի քնար իմ զմայլին.
Այլ ահա, գայ և մօտի ինձ բաժանման անգութ դահիճ,
Եւ յուսոյս թեր բաց ծաղիկ ի փուշ դառնայ ինձ խոցոտիչ,
—Որդ ասա՛, թռչնիկ սիրուն, քեզ պէս թշուառ իսկի չէրկայ,
Եւ բնութիւն կրկնեայ գթով, թերևս յերկնից ինձ լոյսմի գայ։

———

Ո՞վ է այս օձախառիւ սև գուրգորնայ դժոխային,
Որ գալով գայ մերձենայ ինձ սպառնայ անուր բանտին.
Ա՜հ, թռչնիկ մի եմ անպարտ, ազատութեան սիրոյ գերի,
Թէ ծաղկանց ծոց թավալիմ, անգութ սողնոց եմ թշնամի.
Իմ երգերս անուշ լսուին դէմ արևուն ոսկէփայլիկ,
Այր ի գալ սոսկայ ստուեր, բնութիւն լինի հազար լեզուիկ.
Թէ անդոց թռչիմ վերայ, չեմ գողանար նորա հատիկ,
Իմ դատար չէ յայլոց տան, աւերակներն են իմ բունիկ։
Մերթ ընդ մերթ ծաղիկ տանեմ, ցանեմ անշուք այն տեղերուն,
Երբեմն էլ ցողիկ ժողվեմ ցրուեմ ցամքած ոսկորներուն.
Իմ ձագերս դեռ կայտառուն են, դեռ ճրվլան չունին թևիկ,
Ա՜հ, եթէ ես հեռանամ, գուրգուրալով ո՞վ տայ կտիկ,
Թող անոնց երգեմ սիրով մինչև թռչին ինձ պէս ազատ.
Այդ անուր զաղանաց տարրը, որ շէն արին չոր անապատ,

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ ԳՐԱԴԱՐԱՆ ՀՍՍՌ Արա.ԵՍՍՀ Մ. Մ. Մաշտոցի անվան

Ա՜հ, անսիրտ, անմեղ թռչնիկիմը չէ կապանաց այդ արժանի,
Օ՛ն սոխակ և դու բնութիւն կրկնէ զայս բան աղերսալի.

Նկատելով կնոջ, որ երեխային գրկած մեղմիկ արտասուելով մօտ է գալիս.

Եւ ո՞վ է այս որ մօտի, վերաւորուած եղնի պէս,
Մազեր թափած յուսերուն, մի հերապանծ խոյի պէս.
Մանուկ սիրուն ի թևին, վարդ ու շուշան փունջի պէս,
Իւր աչերէն կը ցօղեն շաղաթաթախ տունկի պէս.
Քայլիկ մը առնու և դատրի ուղեկորոյս մարդու պէս,
Կարմրին այտեր ու դեղնին մի թոքացաւ կոյսի պէս,
Երկուք մէկէն արտասուեն զուգնթաց առուակի պէս,
Երկուք մէկէն խոնարհած, մանուշակաց թուփի պէս,
Երկուք մէկէն սիրելի, կագաւ ու տատրակի պէս,
Մայրն ու որդին սիրական, ինձ կից հոգւոյ մարմնոյ պէս.
Մանուկն ասէ ալ մի՛ լար, և նա հայի ցաւագին,
Ո՜հ խօսելու անկարող յօրհաս մերձի հիւանդի պէս.

Ներսէսը տեսնելով իր կնոջ Իսկուհու վիշտը, կարծես մոռանում է իրան, և աշխատում է սիրտ տալ՝ հաճամոզել, բացատրել, որ ինքը նոյնպէս տանջուում է, ցաւում է, հակառակ է պանդխտութեան, բայց անհրաժեշտութիւնից ստիպուած է տեղի տալ... այնուամենայնիւ նրա խօսքերը չեն հանգստացնում Իսկուհուն, որ շարունակ լալիս և լացացնում է գրկին սեղմած իր անմեղ մանկան.

—«Ի՞նչպէս չիլամ երբ դու կենդանի՝ բայց ես մի տառապեալ այրիի նման պիտի մնամ...» — Թշուառ կինը, հարիւրաւոր փորձեր ունի իր աչքի առաջ և շատ լաւ է

ըմբռնել պանդխտութեան նշանակութիւնը... Քանի քանիսները հենց իր աչքի տեսած՝ կարող է մատնացոյց անել, որոնք նոյնպէս անհրաժեշտութիւնից ստիպուած զանազան խոստումներով ու յոյսերով, ուխտերով ու երդումներով՝ բաժանուել են իրանց նորատի ամուսիններից... բայց տասնեակ տարիներ է անցել, այնուամենայնիւ խոստումն, երդումն անգործադրելի են մնացել, գուցէ և մոռացուել... իսկ նրաց դժբաղդ կանայք՝ օրմը կուշտ, օրմը սոված, անթիւ նախատինքներ կրելով, տեղի անտեղի բամբասանաց ենթարկուելով, պարտատէրների լկտի հայհոյանքներ տանելով, վիզը ճկած, աչքը գետին խոնարհած. ականջը ճամբին բռնած, ամեն մի չուող կարաւանի յուրը լսելիս, դռնէ դուռ ընկած՝ իրանց ապերախտ զարիպին երկու տող գիր տանող են փնտռում, իսկ երբ գըտնում՝ լալով աղաչելով, ոտն ու ձեռքը համբուրելով, խնդրում, պաղատում են նոր գնացողներին, որ գոնէ նրանք՝ այնտեղ իրանց երիտասարդութիւն մաշող ամուսիններին, յիշեցնեն նրանց պարտականութիւնն և իբրև ականատես վկայները նկարագրեն իրանց թշուառութիւնը... բայց ի հարկէ էլի դուր...:

Ահա՛, այդ բոլորը մի բոպէի մէջ պատկերանալով Իսկուհու երևակայութեան առաջ, իրաւամբ պատասխանում է.

—«Ինչպէս չիլամ...»

Բայց արդեօք ուրա՞խ է ամուսինն, արդեօք նրան հաճելի՞ է թողնել իր տուն-տեղ, ընտանիքը, զաւակները, ծնողբարեկամները, վերջապէս իր սիրելի և քաղցր յիշատակներով լի հայրենիք, ու գնալ հեռու՝ անտես անծանօթ երկիրներ, օտարի դռներ... առանց մի որոշ յոյսի, առանց

մի որ և է ծրագրի, այլ միայն իր պարտատէրներից ազատուելու և իր խանգարուած տնտեսութիւնը կանոնաւորելու տենչով... բայց այդ քանիսին է յաջողւում և այդ յուսով քանիսներն են անդարձ կորչում, թողնելով իրանց դժբախտ ընտանիքը բաղդի անողոք բերմունքին... բայց թողնենք, թող ինքը Ներսէսը խօսի։

—«Դէթ երկու որդիքս քեզ մխիթար կը թողում. իսկ ես, ահ ես... օտար հողի վրայ ով ունենում ինձ մխիթար։ Ո՞վ իւր ժպիտներով իմ տխուր դէմքիս վրայ վարդի կոկոններ բանայ. ով իւր փափուկ ձեռուներով իմ սրրտիս վէրքերը կապէ։ Երբոր յոգնած ու քրտնած երեկոյ սենեակս դառնամ, ով գայ իմ գրկացս մէջ իյնալու «Հայր, հայր գոչելով». ով զովացունէ իմ քրտինքներս իւր անմեղ շրթանց համբոյրներով, ով իւր թոթովախօսիկ լեզուով Հայրենիք, Հայաստան—նուիրական անուններն արտասանէ. ով մեղմիկ և հատկելաղ ձայնով «Ցաւարշան իմ հոգւոյս շուշան» սրտաճմլիկ երգը գեղգեղէ և իմ հիւանդութեանս տաքնապին մէջ՝ իւր զովարար արտասունքները սրտիս ու ճակատիս վրայ իբրև ապաղինիչ խոր թափէ։ Ա՛հ իմ վշտալի գլուխս որո՞ւ թևոց վրայ հանդչի և ով այն ինչ հրամայեմ ու կատարէ։ Ա՜հ դ ես այս և աւելի քան զայս մխիթարութիւններէ կը զրկուիմ. ուրեմն ինձ անկ է լալ ու արտասուիլ և ոչ քեզ՝ իմ սիրեցեալ ընկեր...

—«Միթէ այնտեղ կը պակասին քեզ սիրոյ գիրկերը...»։

—«...Սիրոյ գիրկ... ա՜հ ես անկէ կը բաժանուիմ և էլ ուր պիտի գտնեմ, իսկ այնտեղ՝ պանդխտութեան մէջ աւելի լաւ կը համարիմ, փշոց թուփերու վրայ ընկողմնած

Հայրենեաց ու ընտանեաց յիշատակով երգել ու լալ, քան թէ կեղծ ու վարձկան սիրոյ գիրկը նետուիլ, զոր եթէ դիժոխք կոչեմ չեմ սխալիր».

—«Ուրեմն ինչո՞ւ շատերն այնպէս կընեն, չէ՞ որ անոնք ալ այդպէս կ'ըսեն ու կը մէկնին...»։

Ներսէսին հազիւ է յաջողւում համոզել կնոջն, որ ինքը նման չէ այն ուխտադրուժ և անհաւատարիմ ամուսիններին, որոնք պանդխտութեան մէջ մոռանալով իրանց հայրենիքի սուրբ յիշատակներն ու դրժելով ամուսնական սուրբ ուխտը՝ թաւալւում են անառակութեան տիղմին մէջ... և միայն այն ժամանակ են միտ բերում տուն, ընտանիք, հայրենիք, երբ խնամող ձեռքերի կարիք են զգում, երբ անբուժելի հիւանդութիւնը դարձրել է նրանց մի անպէտք, մինչև անգամ վնասակար արարածներ, որոնք վերադառնալով հայրենիք, վարակում և բաղմապատկում առանց այն էլ՝ անբաղդ ընտանիքի թշուառութիւնը... Ներսէսը խոստանում է հաւատարիմ մնալ իր ամուսնական ուխտին, սրբութեամբ կատարել իր բարոյական պարտականութիւններն և օր առաջ վերադառնալ դէպ իր որբացած ընտանիքը... Այսպէս երկարերկար խօսել համոզելուց յետոյ՝ վերադարձնում է փոքրիկ մանկան ու վերջին անգամ իր մօրը և զաւակաց հետ ճաշելու ցանկութիւն յայտնում։ Իսկուհին գնում է ճաշի պատրաստութիւն տեսնելու, իսկ ինքը Ներսէսը նորից շարունակում է երգել.

Իմ ծառեր փթթած ծառեր, ոստախիտ զուարթ կացէք,
Եւ առատ առատ միրգեր մինչ գետին խոնարհեցէք;
Որ գառնուկք իմ Հայրաղերկ՝ երբ ձեզ գան ցամքած բերնով,

Ձասես թէ՝ մենք էլ թռչնիկ սլանանք թեթև մարմնով.
Եւ սլանան և անկանին և մնան ոչ շնչասպառ,
Եւ մարին այն ճրագունք, որ մինակ ինձ մխիթար,
Յայնժամ ես հայր տառապեալ, զի չունեմ սիրտ երկաթի.
Ո՛հ կուգայ զիս գտնել մահ՝ յօտար հող, յօտար երկիր...

Բայց ահա, գալիս է բանաստեղծի մայրը, նոյնպէս յուզուած, նոյնպէս արտասուելով... չէ՞ որ նա էլ իրաւունք ունի, միակ որդին է կորցնում... հարսը դեռ ջահիլ է, իսկ թոռները դեռ մանուկ, նրանք կեանքի յոյս ունեն և կարող են վաղ-ուշ գտնել իրենց կորուստը, բայց ինչ անէ ծերացած մայրը, որի միակ ապաւէնը թռչում է ձեռքից, և ո՞վ գիտէ, բաղդ կունենայ նորից գրկելու սիրած զաւակին... և նա արտասվում է, գրկում է որդու գլուխը համբուրում, համբուրում նայում աչքերին, բայց չէ կշտանում, և ինչպէս կշտանայ, չէ՞ որ նա մայր է, ծեր՝ կեանքից անյոյս մայր... ո՞վ պիտի լինի նրա ծերութեան նեցուկ, ո՞վ պիտի լինի նրա հիւանդութեան դարման վշտի սպեղանին, չէ՞ որ սիրած որդու կորուստը վերջին հարուած կը տայ նրա յոգնած ու թուլացած ջղերին և նա կը ընկնի անկողին... այդ բոլորը հասկանում ու ըմբռնում է Ներսէսն և խօսք չէ գտնում մխիթարելու, այլ յուզուած գլուխը թաղցնում է մօր գրկում և հեկեկալով արտասուում... մայրը աւելի փորձառու է, նա զգում է որդու դրութիւնն և չը ցանկանալով աւելի դառնացնել նրա վշտալի սիրտը՝ մեղմում է իր արտասուքն ու խնդրում է որդուն հանգստանալ... Մօր գիրկը վերակենդանացնում է բանաստեղծի մանկական յիշողութիւնը և նա խնդրում է մօրից մի օրօր ասել, որ ինքը քնանայ, եր-

կար յուզմունքից հանգստանայ և սգաւոր մայրը իր գըռեհիկ լեզուով, օրօրի ձևով դուրս է թափում իր մայրական սրտի կսկծալի զեղմունքը. ահա նա.

Սև սարեկէ մը զուլալ զուլալ կը խաղան,
Խաղան թափեն արծաթակող աւազան,
Աւազանէն վեր զոյգ վարդի փունջերուն,
Փունջերը ցօղեն վեր մարմարէ քարերուն.

Օրօր որդեակ, օրօր կտրիճ իմ սիրուն,
Մէրիկդ մեռնէր, որ քեզ չ'տեսնէր էտպէս քուն:

Արև մօտ է ոսկէ թելեր ժողվելու,
Ջուտով դառնայ սև-սև սուգեր հանելու,
Ա՜հ, իմ արև էլ չեմ գիտեր երբ կուգայ,
Թէ գայ կեանքիս, թէ սև հողիս լոյս կուտայ.

Օրօր որդեակ, օրօր կտրիճ իմ սիրուն,
Մէրիկդ մեռնէր, որ քեզ չ'տեսնէր էտպէս քուն:

Աստուած, ինչի՞ մօր մը ծովով գութ տուիր,
Կ'տոր մը թևիկ ինոր վերէն չը տրիր,
Որ զարիպին կարօտամաշ չը մնէր,
Որ թէ մեռնէր աչքիկ խեղճ-խեղճ չը հայէր.

Օրօր որդեակ, օրօր կտրիճ իմ սիրուն,
Մէրիկդ մեռնէր, որ քեզ չ'տեսնէր էտպէս քուն:

Աստուած ինչի՞ սիրտս գեհեն վառեցիր,
Ու դու սարի աղբիւրի պէս մնացիր,
Ա՜հ, ես մեղայ, ներէ՞, մարդ եմ, տկար եմ,
Կին եմ, մայր եմ, որդիս ողջ-ողջ կը թաղեմ.

Օրօր որդեակ, օրօր կտրիճ իմ սիրուն,
Մէրիկդ մեռնէր, որ քեզ չ'տեսնէր էտպէս քուն։

Ա՛յ եղունիկ, մի լար, ձագերդ թէ չը կան,
Ղուտով կ'աճես, շուտով կանես մտահան,
Ա՛հ. ես ցամքած, մէկ հատիկս էլ հեռանայ,
Ու ճար չ'կայ թէ իմ սրտիկս հովանայ.

Օրօր որդեակ, օրօր կտրիճ իմ սիրուն,
Մէրիկդ մեռնէր, որ քեզ չ'տեսնէր էտպէս քուն։

Որդեակ, որդեակ, թէ գաս բարով ձիերով
Մէրիկ կանչես, ասեն մեռաւ կարօտով
Ատուած սիրես իմ գերեզման չը մոռնաս,
Քանիմ՝ արտասունք չոր հողերուս ընծայ տաս.

Օրօր որդեակ, օրօր կտրիճ իմ սիրուն,
Մէրիկդ մեռնէր, որ քեզ չ'տեսնէր էտպէս քուն։

Բ.

Արշալոյս է... կրկին ու կրկին լսւում է զանազան եկեղեցեաց հինաւուրց կոչնակների դիսկլտոց և զանգերի զողանջիւնը, կեանքը նոր է սկսում զարթնել, փողոցներում երևում են ըստուերների նման անցնող ծերունի մարդիկ և կանայք, որոնք իրանց մտքում աղօթքներ փսփսալով եկեղեցին են շտապում... ահա, մէկը միւսի յետևից սկսեցին բացուել փողոցների դռներն, որոնցից դուրս եկած ժրաջան աղջիկներ և նորատի հարսները շտապով ջրում ու ավում են իրանց սահմանները... կանայքն ամբողջ ոտքի վրայ են, բակի կամ երեսբացի օջախների վրայ քաղքւորների համար կերակուր են պատրաստում...

...Օրը բացուեց, թռչնոց ճլվլոցը, սոխակների դայլայլը զեփիւռի փսփսուքը, նոր զարթնած մանուկների ուրախ քրքիջն այդ բոլորը ուրախ կեանք են աւետում...

Բայց ահա, այգու դռան՝ պատի տակ առանձնացած է մի հասակաւոր կինը, գլխաբիւն հայցող հայեացքը երկնքին ուղղած, կուրծքը ծեծելով աղօթում է. նրա աչքե-

ը երկար ու անչափ լալուց ցամաքել են, էլ արտասուք չի երևում, այժմ նրա սիրտն է որ կուլայ և արիւն կուլայ... ա՜խ նա մայր է, միակ որդու մայրը որին՝ այդ օրուայ մեկնող կարաւանը պանդխտութեան պիտի տանի...

Ներսէսի մայրն է այդ...

Թողնենք մօրը, որ լայ ու աղօթէ. նրա լացն ու աղօթքն անզօր են որդու ճակատագիրը փոխելու, նրան պանդխտութիւնից փրկելու... իսկ մենք ներս գնանք ուր աւելի սրտառուչն կայ տեսնելու. Ներսէսը պառկած անկողնու մէջ՝ դեռ քնում է, իսկ նրա կին Իսկուհին, նրստած սնարին, կուլայ ու մեղմ ձայնով կը երգէ։

Գարուն է, կելնի արև, սարին ետևէն ա՜հ սրլսրլալով,
Եւ անուշ փչէ հովիկ՝ ծաղկանց վրայ զրլզրլալով,
Դաշտ ու թուփ կանաչ հագեր՝ ցողեր վերէն մարգարտաշար,
Ու հաւքեր ձէն ձէնի կից՝ կը ճրլվրլան համար հազար.

«Ա՜յ բարով ծիրանաւոր, մեր ոսկէ թել թագաւոր,
Դու մեր կեանք մեր մխիթար, դու հազար բարով եկար»։

Կին մը մենակ, ա՜հ գունաթափ՝ ձեռքով բացուած ծաղկի նման,
Մերկացած ամեն զարդեր՝ փեդրափոխած հաւու նման
Ձեռն ի ծոց, վզիկ ծռած, սիրականին առջև նստեր,
Մէկ կասի՝ հազար թափէ, աղբիւր դարձեր են իւր աչքեր,

Անէծք ասէ քեզ արև, որ սիրական գաս բաժնել,
Անէծք քեզ էլ ծիծեռնակ, ձէնիկ ձգած սիրարձակ։

Ծիծեռնակ իմ ծիծեռնակ, հէրիք երգես թռիր գնայ,
Այս տունը՝ տուն է սգոյ, քեզ արտասուաց բաժին չը կայ.

Դու դարնան զուարթ թռչնիկ, գնա՛ փթթուն ծաղկանց վրայ,
Թող ինձ սուգս և սիրականս, որ անուշ քուն հանգստանայ.

Հովերն անուշ, քունն անուշ, քնացիր իմ սիրական,
Եւ ընկեր քո սևաւոր քեզ ասի մեղմիկ օրօր։

Քո երկու արեգակունք ծածկեր են սիպտակ ամպեր,
Մի բանար իմ սիրական, մի տեսներ թոռմած վարդեր,
Դու անուշ երազներով դատար ա՛ռ էնպէս տեղեր,
Ուր զուարթ է ամեն բան, ուր չկայ խորշակ ձմեռ.

Հովերն անուշ, քունն անուշ, քնացիր իմ սիրական,
Մի տեսներ դու կարաւան, մի լսեր զանգակի ձայն *)։

Դու վառուած քաջ բանաստեղծ, ես ունիմ ձէնիկ սիրուն,
Դու ինձ տուր անուշ երգեր, ես ասեմ սիրով զեղուն.
Ձագերուս ձեռքէն բռնած, դունէդուռ երգեմ ու լամ,
Մուրացիկ թէ տուն դառնամ, քո տեսքով վարթամանամ.

Հովերն անուշ, քունն անուշ քնացիր իմ սիրական,
Մի թողուր քո Հայաստան, քո ձագեր, քո օթևան։

Դառն է հայ կնոջ համար բաժանուիլ ամուսնուց, զաւակից, եղբօրից, բայց աւելի դառն է վանեցի կնոջ համար, նա իսկապէս պատրաստ է իր որդոց ձեռքից բռնած լալով երգել և մուրալ, միայն չը բաժանուել իր սի-

*) Տաճկաստանում և պարսկաստանում հաղորդակցութեան կանոնաւոր ճանապարհներ չը լինելու պատճառով, երթևեկութիւնը կատարւում է ձիերի, ջորիների, երբեմն նաև էշերի կարաւաններով, որոնք ընդհանրապէս զարդարուած են լինում զանազան մեծ ու փոքր բոժոժներով և զանգակներով։

ելուց. գուցէ դա նրանից է որ վանեցին շատ քիչ դէպքումն է ընտանիքով պանդխտում, բացի այդ, վանեցի կինը դժուարութեամբ է հաշտւում օտար կեանքին և միշտ անձկութեամբ է յիշում հայրենիք, ինչ պայմանների մէջ էլ որ լինի. այդ կէտում կանայք աւելի պահպանողական են և ընտանիքով պանդխտել նրանց աչքում համարւում է կրկնակի դժբաղդութիւն. ի հարկէ, պակաս չեն դէպքերը, երբ պանդխտողի կինն ամուսնուն կասեցնելու ուրիշ միջոց չը գտնելով, առանց մտածելու խնդրում է իրանն էլ հետ տանել։ Բայց ո՞ւր կարող է տանել խեղճ ամուսինը, երբ ինքը գլուխ դնելու տեղ չունի, նա գնում է անյոյս, անծրագիր՝ իր կոյր բաղդին ապաւինած, նոյն իսկ առանց նիւթական միջոցի. նա ահագին զոհողութիւններով, հրէշային տոկոսներով, իր անշարժ կայքերը գրաւի դնելով՝ հազիւ կարողանում է այնքան փող ճարել, որ մինչև Կ. Պոլիս բաւականացնի իրան, իսկ նրանից յետոյ ինչ կը լինի՝ դրա մասին չի էլ մտածում... Մեծ բաղդ է այն պանդխտողի համար, որ օտարութեան մէջ ազգական ունի, կամ տեղ հասնելիս յաջողում է շուտով մի որևէ մեծատան մօտ սպասաւորի՝ կամ դռնապանի ստորին պաշտօն ճարել. նա, այդ պանդուխտը, նոյն իսկ հայրենիք վերադառնալիս էլ երախտագիտութեամբ և պարծանքով կը յիշէ իր այն բարերարներին, որոնք ժամանակով իրան ծառայեցնելու պատիւ են արել...

Իսկ ինչ էր ներկայացնում այն ժամանակ տաճկահայը. դարևոր ստրկութեան ճնշման անդեցութեան տակ ընթացած, հեռու լուսաւորուած կենդրոններից, լուսոյ ճառագայթներից, զուրկ խելացի մտածողներից, զուրկ ընդունակ նախաձեռնողներից, նպաստող միջոցներից, անընդունակ է իր կեանքի պայմանները փոխելու, նա միայն արտասուել գիտէ և արտասուում է, առանց իր ձայնը լսեցնել կարողանալու... իսկ ազգային լուսաւորիչներ, ինտելիգենտ գործիչները կենդրոնացած Կ. Պոլսում, օգտուելով բաւական լայն նորահաստատ սահմանադրական կանոնադրութիւնից, երէցփոխանական ժողովում փքուն ճառեր արտասանելով, անմիտ կուսակցութիւններ կազմելով, երևակայական հարցեր են քննում...

—«Ազգերնիս կառաջադիմէ կոր»...

Խեղճ գաւառը, թողնուած դժբախտ ճակատագրի կամքին, խարխափում է խաւարում, յանձնելով իր հասարակական գործերի ղեկը Պոլսում այվազութեամբ, օդաբաշութեամբ և չոփչիութեամբ քիչ շատ հարստացած զանազան բաղդախնդիր աղաներին, որոնք թէ հոգաբարձու են և թէ երէցփոխան, թէ թաղական խորհրդի անդամ են և թէ թաղի իշխան, մինչև անգամ դրանցից են դուրս գալիս ժողովրդի դաստիարակ, ուսուցիչ և վարժապետ։ Բայց ես հեռացայ նիւթից։

Զարթնում է Ներսէսը. կինը արտասուելով բացատրում է իր ցանկութիւնն երդելով մուրալ և կասեցնել նրան պանդխտութեան ճանապարհից, բայց Ներսէսը դառնութեամբ ժպտալով՝ կնոջ միամտութեան վրայ, մերժում է այդ ստորութիւնը, այն ժամանակ Իսկուհին խնդրում է իրանն էլ հետ տանել. բայց զուր. բանաստեղծը ցոյց տալով մօրն և զաւակներին ու բացատրելով իր նիւթական դրութիւնը, ի չիք է դարձնում կնոջ այդ ցանկութիւնն էլ։

Վերջապէս գալիս են Ներսէսի բարեկամները, բերելով երկու ձիերը. մօտենում է բաժանման սրտաճմլիկ ըն-

պէն. տունը լցուում է բարձրաձայն լաց ու սուգի աղաղակներով. Ներսէսը մօր և կնոջ ներկայութեանը Հաւատարիմ բարեկամներից ամենամտերմին յանձնարարելով իր տան հոգատարութիւնը, համբուրւում է բոլորի հետ, ապա վերջին անգամ համբուրելով իր զաւակաց, հեծնում է իրան յատկացուած ձին.

Գ.

ուսնեակ գիշեր է. հեռուից լսւում է մօտակայ գիւղերի արթուն պահապան շների թոյլ կաղկանձիւն, որոնք իրանց սուր հոտառութեամբ զգալով օտար մարդկանց մերձաւորութիւնը, թոյլ և անորոշ կերպով գայլահաչ են տալիս։ Գարնանային գիշերում՝ շրջակայ լեռներից փչող մեղմիկ զեփիւռը շփուելով փոքրիկ դաշտի դալարագեղ խոտերին, առաջացնում է մի խորհրդաւոր սոսափիւն, նման մանկան օրրանի կողքին ննջող գորովագութ մօր օրօրին... Ահա, այդ փոքրիկ դաշտի մէջտեղից՝ դարերով հոսող ոլորապտոյտ Սև գետի ափին, հեռուից նշմարւում է հանգչող կրակի վերջին առկայծող լոյսերը, իսկ նրանց շուրջն արծաթափայլ լուսնի աղօտ լոյսով նկատւում են ցաք ու ցրիւ ընկած զանազան մեծութեան թամբալիթները...

Պանդուխտների կարաւանն է այդ.

Տխուր ու մռայլ մտածմունքները, սիրելիներից բաժանման ծանր յուզմունքները, խառնուելով ալկոլի ազդեցութեանը, թմրեցրել են այդ թշուառների ուղեղն, որոնք փռուած հանգչող խարոյկների շուրջը, ոմանք ննջում, իսկ ոմանք դեռ անկապ պօռոտախօսում են... Լուռ է շրջակայքը. Սև գետն է միայն, որ դարերէ ի վեր անձանձիր երգում է իր մեղմիկ օրօրը... Երբեմն գետի երկայնութեամբ ձգուող հեռու ձորերից լսւում է կարաւանի արածացող ձիերի խրխինջն ու բոժոժների զնգզնգոցն, որին հետևում է արթուն ձիապանի զգուշացնողական կանչն. և կրկին ամեն ինչ լռում... Բայց ահա, գիշերային այդ լուռ՝ խորհրդաւոր պահուն գետի մօտակայ ափից, լսւում է մի տխուր երգի ախորժ ելևէջ, որ խառնուելով դարնանային գիշերուայ զեփիւռի սոսափող ալեաց՝ գնում տարածւում հեռու՝ հեռու անյայտութեան մէջ...

— Ներսէսն է դա.

Անբաղդների այդ ահագին կարաւանում չկարողանալով մի սրտակից ճարել, մենակ էր մնացել իրան մաշող վշտերի հետ, և ահա նա առանձնացած Սև գետի աւազոտ ափին, հայեացքը լուսնին ուղղած երգում է ու լալիս.

Նստեր եմ ողորմագին արծաթափայլ լուսնի դիմաց,
Աչերէս սև-սև վտակ թափեմ ի Սև-գետին ի գնաց
Ալ չկան սիրուն ձաղերս, որ հայը ասեն մի՛ լար մի՛ լար,
Ո՛չ մայրիկս ոչ սիրականս, որ արտասունք խառնենք յիրար:

Գիշեր է հանգչիլ կուզեմ, բայց ահ ուր են սիրոյ գիրկեր,
Դու ա՛ւաղ, դուք ա՛ղաղաժք, կրնաք անոնց փոխանակել,
Ա՜հ, լցէ՛ թէ քուն անուշ, իմ արտասուք ցամքեցուներ.
Եւ երազ իւր թևերով, զիս սիրոյ գիրկ հանգուցաներ:

Բայց Մորփէ՝ զինչ կոյս երկչոտ յուզեալ ի ծով չիգար ի լող,
Ո՛վ ամպեր, դէթ մի՛ ծածկէք լուսնին պատկեր գեղափողփող.
Ինձ քաղցր է ճերմակ իւր դէմ փոյթ չէ թէ վարդ չ՚կայ բոլոր,
Ինձ քաղցր է խօսիլ առ այն, քան հետ ընկերց մտամոլոր:

Երանի՛ քեզ ո՛ լուսին, որ կը տեսնես աչօք պայծառ.
Այն պատկերք ոյց յիշատակք, ինձ հետ տանիմ խելար մոլար.
Երանի՛, զի քո շողեր շատ համբուրեն այն երեսներ,
Որոնցմէ ո՛հ իմ շրթունքս զրկուելով են ցամաքեր:

Ա՜հ, եթէ իմ սիրականքս առ մեծ վշտին մոռնան ճրագ,
Կամ թէ, վա՛յ ինձ հազար, իւր գնելու չը լինին ճարակ,
Դու լուսին, ծիծաղադէմ իմ ձագերուս ծագէ յերես,
Որ չի լան դառնակսկիծ, զոչեն հայրիկ ո՞ւր ես, ո՞ւր ես:

Ո՜ լուսին, շատ դադարէ իմ ցաւած հօր շիրմին վրայ,
Ուր թերևս իմ արտասուք փշոց վրայ դեռ կը շողայ,
Իմ փոխան դու համբուրէ՝ այն չորացած օրհնեալ հողեր,
Իմ փոխան դու զովացուր, նորա ցամքած սուրբ ոսկորներ:

Ո՜ լուսին, շատ լոյս սփռէ՝ նուիրական վեհից շիրմանց,
Որոնցմէ ես հեռանամ կարօտամաշ և թառամած.
Թէ հայեր արտասուաթուրմ ծաղիկ չը թափեն այն հողերուն,
Դու սփռոց արծաթաթել զարդ տուր շիրմանց վեհ պապերուն:

Երանի՛, որ խաղաղիկ հանգչիս այժմ այն ափանց վրայ,
Ուր ծիծաղ ծաղիկներէն թռչէր յիմ դէմ մինչ ես տղայ.
Երանի՛, որ շողշողաս ճերմակ ծաղիկ ծառոց վերայ,
Զոր իմ ձեռք մշակեցին, պտուղ չը քաղած և հեռացայ:

Բայց ահա՛, թուխ ամպերով քո քօղարկի սիրուն պատկեր,
Իբրև բաղդ հէգ պանդխտիս, որ մերթ ժպտէր գարնանագեղ.

Մնաս բարով, ո՛ լուսին, չեմ ուշանար դարձեալ տեսոյդ,
Քո վեհ դէմքդ ինձ մխիթար և պէտք ունիմ ես քո գեղոյդ։

Բաւականին երգելուց կամ աւելի ճիշտը սգալուց յետոյ խորասուզուելով մտածմունքների մէջ, սկսում է մենախօսել, այդ ժամանակը ճանապարհորդակիցներից մէկը՝ մի պատանի, որ նոյնպէս գիտակից լինելով իր դրութեան դեռ արթուն մտածում էր. գիշերային անդորը լռութեան միջից՝ լսելով տխուր երգի սրտառուչ բառերը զգում է, որ երգողն ևս իր նման և գուցէ իրանից էլ աւելի դժբաղդին մէկը պիտի լինի. նա վեր կենալով իր տեղից մօտենում է երգչին և բարևելով յայտնում է իր վշտակցութիւն։ Անկոչ հիւրի յայտնութիւնը սկզբում վշտացնում է Ներսէսին, բայց նկատելով այդ պանդխտող պատանու անկեղծ վերաբերմունքը և կրթուած խօսակցութիւնը, սիրով է ընդունում։ Լինելով բաղդակիցներ, նրանք շատ շուտ են մտերմանում և նրանց մէջ սկսում է մի բարեկամական խօսակցութիւնը. պատանին որի անունն Ոստանիկ էր, պատմում է իր զգացմունքները, թէ ինչպէս հակառակ իր ցանկութեան, ստիպուած է հեռանալ իր սիրելի հայրենիքից և ուղեկցել իր արբեցող հօրը, որն ամէն րոպէ անտեղի կերպով ծաղրելով իր ուսումը, վիրաւորում է իր ինքնասիրանութիւնը և շատ անգամ կոպիտ կերպով ստիպում է՝ լաւ մարդ դառնալու համար, իրա օրինակին հետևել... Յետոյ նիւթը փոխուելով երկար խօսում ու վիճում են պանդխտութեան և նրա պատճառների մասին, որի ընթացքում միշտ միևնոյն եզրակացութեան են գալիս... խօսում են իրանց կարդացած զանա-

զան հեղինակներից, փիլիսոփաներից, պատմական դէպքերից, մինչև որ Ոստանիկի հայրը զարթնելով նկատում է որդու բացակայութիւն. նրա բարձրացրած աղմուկից զարթնում են նաև նրա արբած ընկերներն, որոնք Ոստանիկին Ներսէսի մօտ գտնելով՝ անտիղի կերպով հայհոյում ու նախատում են խեղճ բանաստեղծին, բայց Ներսէսի սիրտը լի է բանաստեղծին յատուկ բարութեամբ, որով նա տգիտութեան վիրազրելով իր կրած վիրաւորանք ներողամտութեամբ է վիրաբերւում դէպի այդ դժբաղդները ու մոռանալով իր սեփական վիշտը, նրանց հեռանալուց յետոյ էլ՝ դեռ երկար մտածում է նրանց մասին. այդ ժամանակ նրա երևակայութիւնը հեռանալով՝ կրկին յուզուած սկսում է երգել.

Ցանած, ցրուած մազերդ առջև ցուրտ հովերուն,
Թափած ոսկի թելերդ, շաղուած ի տիղմերուն,
Թուխ-թուխ աչերդ հոսին պղտոր ջուրից յընթաց,
Ի վեր հայիլ չուզես զինչ կոյս մի մերժուած.
Անուանդ մեռնիմ մայրիկ, այդ ի՞նչ դառն վիճակ՝
Անզարդ գլխուդ մատաղ, ո՞ւր է քո թագ պսակ։

Շատ մայրեր տեսած եմ, քեզ պէս թշուառ չ՚կայ,
Շատ վէրքեր տեսած եմ այլ քոյդ նման չ՚կայ.
Երբ «ահ որդի՛ք» կանչած փռուիս գետնի վրայ,
Բոլոր մարմինդ որդուոդ յարիւն կը լողանայ.
Անուանդ մեռնիմ մայրիկ, այդ ի՞նչ դառն վիճակ,
Անտէր գլխուդ մատաղ, ինչո՞ւ կաս միայնակ։

Որդիքդ՚ի քո ծոցէն խումբ խումբ կը հեռանան,
Վիրացդ վերայ ակնարկ մը ձգել չուզեն անգամ,

Շատեր անուանդ հնչեն զի նորութիւն է այն,
Շատերն անտի զզուին զի հարքն չասացին զայն.
Անուանդ մեռնիմ մայրիկ, այդ ինչ դառն վիճակ,
Լքուած գլխուդ մատաղ, ուր են քո վեհ սպայք։

Բաժնին գրկէդ հաղարն և կէսն հազիւ դառնան,
Դառնան բայց հո, ինչպէս—հայու մի ուրուական,
Երկուքն ի նոցանէ հազիւ քեզ ողջոյն տան,
Եւ այլք իբրև անբան լռիկ անցնին գնան.
Անուանդ մեռնիմ մայրիկ, այդ ինչ դառն վիճակ,
Ծուած վգիդ մատաղ, ուր են քո հարազատք։

Ա՛հ, քո որդւոց շատեր իբր այր մը անպատկառ,
Բանդ, շղթայ, նախատինք իբրու թէ չեն զգար,
Ազնուական զաւակ, առողջ, անձնեայ և ժիր,
Բայց այլոց փշրանքով լիանալու յօժար.
Անուանդ մեռնիմ մայրիկ, այդ ինչ դառն վիճակ,
Պատկառ դէմքիդ մատաղ ուր է քո լի բաժակ։

Ո՜ փարթամք, որ գիտէք զայս իմ մայր ցաւագին.
Որ այժմ զուրկ շատ յորդւոց՝ հեծէ ողորմագին.
Գէթ դուք ողորմեցէք իմ տառապեալ այս մօր,
Գէթ դուք բարձրացուցէք ճակատն ամօթաւոր.
Անուանդ մեռնիմ մայրիկ, հո ձայն տուող չ'կայ,
Գետին այո՛ զքեզ բայց ցաւոցդ անզգայ։

Մայրիկ, յայս փուշ ցաւոց չկա՞յ յուսոյ շուշան,
Որ տամ ծիծաղադէմ, այնպէս լռեմ իմ ձայն.
—Ցարևմտից թռան հրաշատեսիլ թռչունք,
Որ փուշեր խլելով ցանեն ծաղկանց սերմունք,
Ասեն թէ այն ծաղկունք դեղ են քո խոցերուդ,

Ասեն թէ այն ծաղկունք զարդ են քեզ անկապուտ։
Դու յուսոյ այս գինւով թմբիր առ սակաւիկ,
Մի ասեր թէ յոյսեր ո՛չ չեն միշտ խաբուսիկ։

Այդ ժամանակ Ոստանիկն այլայլուած մօտ վազելով՝ յայտնում է, որ կարաւանը շրջապատուած լինելով մի խումբ զինուած աւազակներէ, ամեն ոք սարսափած իր գլուխն ազատելու ճարն է որոնում, ուստի շտապիր թագնուեքն... բայց Ներսէսը փոխանակ թագնուելու, հանում է գրպանից ատրճանակը և հերոսի նման առաջ վազում...

Այստեղ վերջացնում է հեղինակը, ընթերցողի երևակայութեան թողնելով իր բանաստեղծախառն պատմութեան շարունակութեան հետևելու... իսկ ես, իբրև վերջաբան աւելացնում եմ այստեղ «Քնար Հայկական»-ից արտատպուած նոյն հեղինակի մի ուրիշ ոտանաւորը, վանեցոց լեզուով։

ՊԱՆԴՈՒԽՏ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆՑԻՆ ԻՐ ԸՆԿԵՐԻՆ

Թող ախպէր թող, որ իմ սիրտ կրակ ու բոց վառուած էլնի,
Թող իմ աչք կկլացող պղտոր-պղտոր աղպիւր էլնի,
Թէ տիւն էլ արտսունք ունիս, արի ծիկ հետ ու լաց արա,
Մեր արտսունք թող ամպ կտրի, հայոց դաշտեր անձրև էլնի։

Թողեր ենք ծէթկիկ ծեագերս խեղճ ու կրակ վեր պաղ թորվան,
Ա՞ս ախպէր ինոնց արև ինոց օրեր մենք ենք տուեր,
Թողեր ենք մեր կողակիցք վզիկ ծռած կէլիւ պերան,
Կողակիցք որ չում մահուան հետն ապրելիւ ուխտ ենք արեր,
Թող ախպէր թող, որ իմ սիրտ կրակ ու բոց վառուած էլնի,
Թող իմ աչք կկլացող պղտոր-պղտոր աղպիւր էլնի։

Քելեր ենք շատ սար ու ձոր, արուն գետերն էլ անցեր ենք,
Էս մարդ է, թէ հրեշտակ է, քար է թէ հաւք զարմացեր ենք,
Ա՞ս մեր տղերք կանչելով ճանպահ զըմէն լացուցեր ենք,
Ղարիպ ենք էս երկրի մէջ, ուր որ անպան հեսապուեր ենք.
Թող ախպէր թող որ իմ սիրտ կրակ ու բոց վառուած էլնի,
Թող իմ աչք կկլացող պղտոր-պղտոր աղպիւր էլնի։

Մեզ ինչի՞ խամար գինի, երբ մեր տղէք սև խաց չունին,
Մեզ ի՞նչ պէտք օտարին զարդ, երբ մեր ինկեր պէօպիկ էլնի
Է՞ր երթանք տեսնել էն փառք, որ մեր ճակտի քրտինք էլնի,
Օտարին տուն մեզ ի՞նչ շահ, երբ մեր տուն փուտ կէրան չունի,

Թող ախպէր թող, որ իմ սիրտ կրակ ու բոց վառուած էլնի,
Թող իմ աչք կկլացող պղտոր-պղտոր աղպիւր էլնի։

Էնկանդար ենք խոնարհեր, որ հմէն մարթ մեզ պեռ կը դնի,
Էս մարդ է, թէ անասուն, իսկի հարց փորձ արող չը կայ,
Մէկ քրտինք մէկ փարայի կուտանք, շատ տիր առնող չը կայ,
Փոսի մէջ ինկած զարիպ, մեր ձեռք բռնող հանող չը կայ.
Թող ախպէր թող, որ իմ սիրտ կրակ ու բոց վառուած էլնի,
Թող իմ աչք կկլացող պղտոր-պղտոր աղպիւր էլնի։

Էս երկնուց խաւքերը տես, ինչպէս կերթան ճվվալով,
Որ ծեագն ի առեր թևին, որ կուտ կը տանի ուր ծեագերին,
Մենք մարդ ենք, խայու տղայ, կեանք կընցուցենք ա՞հ ու զարով
Կեանք չունենք մահէ կը վախնանք, մեր գերեզման կը լցուի փշով.
Թող ախպէր թող որ իմ սիրտ կրակ ու բոց վառուած էլնի,
Թող իմ աչք կկլացող պղտոր-պղտոր աղպիւր էլնի։

Թէ հովեր իրար զարնեն տեղ մը չունինք պախկելու,
Թէ ամպեր կարկուտ թափեն, տուն մը չունինք սթարելիւ,
Թէ երկինք ճէր էլ էլնի, խելք չունինք վաստկելիւ
Օ՛հ էս ինչ խօրօտ օր է, կասենք փարէք կուտանք գինու.
Թող ախպէր թող, որ իմ սիրտ կրակ ու բոց վառուած էլնի,
Թող իմ աչք կկլացող պղտոր-պղտոր աղպիւր էլնի։

Ձորս տեհէն ծովերն առեր, մենք չոր կղզի մը մնացեր ենք,
Ես կասեմ կեամի շինենք, տիւ գինով ես աւալ թաւալ,
Որ մէկն էլ թէ ես շինեմ, կուկեայ կոտրի չիմարաբար,
Օրէ օր ծով կը պարծրանայ, շատեր խեղդեց եամ՞ն մէկ ճար.
Թող ախպէր թող, որ իմ սիրտ կրակ ու բոց վառուած էլնի,
Թող իմ աչք կկլացող պղտոր-պղտոր աղպիւր էլնի։

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԱԿԱԴԵՄԻԱ
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
ՍՍՌ Ակադ.
Մ. Ա. ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ

Արէ՛ Հան ախպէր արէ, սիրտդ մանի՛ր քեարի նման
Թէ կը սիրես քեռ Քրիստոս, քեռ պապերու սուրբ գերեզման,
Ու հրմէն դարիպ կուրպաթ հայու տղէք խաւսարական,
Էկէք ասանք մեր քրտինքներ, մեր ցաւ ու դարտ կալմի պէրան,
Հէսապենք, վայ մեզ ասենք, մեր սիրտք փխրին, աչք կկլան,
Մեր արտասունք ամպ թող դառնան հայոց դաշտին վերէն խաղան։

Տիգրան Ամիրճանեան

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՌՈՒՍՏ

ԳԻՆՆ Է 15 ԿՈՊ.

ՀՀ Ազգային գրադարան
NL0313034

19.135